որպէսզի հաւերը շատ ձու ածեն ու շուտ թուխսի գան. կամ ոչխարների, այծերի և կովերի գոմերում շաղ են տալիս, որ գէր լինեն և առատ կաթ տան։ Մի կրակ էլ վերցնում և երդիքի ծակից գցում են ցած ասելով «կատուն նիհ, մուկը դուրս»։

Ս Սարգիս։ Առաջաւորաց պասը այս գաւառում ևս յայտնի է, որպէս Ս. Սարգսի պաս, որ մի առանձին նշանակութիւն ունի այստեղի գիւղացիների համար։

Այս գաղթականների կարծիքով Ս. Սարգիսը մի զօրաւոր սուրբ է, որ հալածւել և նահատակւել է քրիստոնէական հաւատքի համար. այդ պատճառով էլ եկեղեցին տօն է նշանակել և ամեն տարի տօնում է նրա յիշատակը։

Ս. Սարգսին, Փէրիայում հասած աղջիկները և կտրիճներն իրենց «մուրատ»-ին հասնելու համար այդ պասի շաբաթը սովորաբար հինգ օր, Բշ. օրից սկսած մինչև Շաբաթ օրը ծոմ են պահում և ճաշակւում։ Իսկ գիւղացիների մէջ կայ հետևեալ սովորութիւնը.

Չորեքշաբթի առաւօտեան ժողովրդից ընտրւած երկու մարդիկ շրջում են գիւղացիների տները և մատաղագին հաւաքում, իսկ Հինգշաբթի օրը ժողովրդից ընտրւած մի յանձնախումբ գնում է եկեղեցի տեսնելու համար, թէ հաւաքւած գումարով քանի՞ ոչխար կարելի է գնել։ Նոյն օրը, ով որ Ս. Սարգսին ուխտ է խոստացել՝ ոչխար է բերում եկեղեցու բակը, ուր մօտաւորապէս հաւաքւում է 30—40 ոչխար։ Ուրբաթ առաւօտեան քահանան գնում է եկեղեցի և օրհնում մատաղացուներին, ապա իր ափի մէջ աղ դնելով՝ լիզել է տալիս, որից յետոյ հէնց եկեղեցու բակում մորթում են ոչխարները, մաս-մաս անում միսը և իւրաքանչիւր տուն հաւասար չափով բաժանում են. այդ մսից նոյն օրը հարիսայ են դնում։ Թէ ինչից է առաջ եկել ոչխար մատաղ անելու այդ սովորութիւնը յատկապէս Ս. Սարգսի տօնին,— Փէրիացիք իրենք էլ չգիտեն։ Նրանք այդպէս իրենց հայրերից տեսել են, այդպէս էլ աւանդաբար կատարում են։